ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն (ք. Սանկտ Պետերբուրգ և ք. Մոսկվա)

2019 թ. սեպտեմբերի 11-ից 15-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Ալֆրեդ Քոչարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք.Սանկտ Պետերբուրգ և ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. սեպտեմբերի 11-ից 15-ը

4. **Հրավիրող կողմը**

ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցություն ՄԱԿ ԶՀԿ գլխավոր ասամբլեայի 23-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները**

Նստաշրջանի ընթացքում քննարկվեցին և անդամների քվեարկությամբ ընդունվեցին ՄԱԿ ԶՀԿ գործունեությանը վերաբերող կարևոր որոշումները, որոնց թվում էին նոր երկրների ՄԱԿ ԶՀԿ-ին անդամակցության հարցը, 2018-2019թթ. ծրագրով նախատեսված կատարված և կատարվելիք աշխատանքները, ինչպես նաև 2020-2021 թթ. ծրագիրը և

բյուջեն: Քվեարկությամբ ընտրվեց նաև Գլխավոր ասամբլեայի 24-րդ նստաշրջանի անցկացման վայրը՝ Մարոկկոյի Թագավորությունը:

Անցկացվեց նաև ՄԱԿ ՋՀԿ գործադիր խորհրդի 113-րդ նստաշրջանը, որի ընթացքում մի քանի առանձնազրույցների ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն մեկնարկել գործադիր խորհրդում Հայաստանի ընդգրկում գործընթացը:

Այցի ընթացքում պատվիրակությունը մասանցել է նաև «Բժշկական և առողջապահական զբոսաշրջության» վերաբերյալ համաժողովին, «Զբոսաշրջության ոլորտում նորարարություն և կայուն զարգացում» թեմայով գագաթնաժողովին, «Զբոսաշրջության ոլորտում կրթության և զբաղվածության հարցերը» թեմայով նախարարական քննարկմանը, ինչպես նաև տարածաշրջանային և ընդհանուր պլենար նիստերին, իսկ 14-ին ՌԴ Մոսկվա քաղաքում պատվիրակությունը մասնակցել է «Համաշխարհային քաղաքներում զբոսաշրջության զարգացման ռազմավարություններ» խորագրով կոնֆերանսին:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ և առանձնազրույցներ են տեղի ունեցել ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլիի և Ռուսաստանի Դաշնային Գործակալության ղեկավար Զարինա Դոգուզովայի հետ, որոնց ընթացքում քննարկվել են հետագա համագործակցությունների խորացման հարցերը և վերջիններիս գլխավորած պատվիրակությունների Հայաստան պաշտոնական այցերի մանրամասները:

Տեղի են ունեցել նաև հանդիպումներ ՌԴ-ում ՀՀ դեսպանության և հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր ուղղված Ռուսաստանում Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը, ձեռք են բերվել պայմանավորվածություններ կազմակերպելու մի շարք մարքեթինգային միջոցառումներ, այդ թվում մարքեթինգային ակցիաներ ռուսական ավիաընկերությունների հետ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպում է տեղի ունեցել նաև Տաշիր ընկերությունների խմբի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ընկերությանը պատկանող կինոթատրոններում և գովազդային հարթակներում Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակների անվճար տարածման վերաբերյալ:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

Գլխավոր ասամբլեայի ընտրության ընթացքում, նախնական պայմանավորվածության և հղած նոտայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը իր ձայնը տվել է Մարոկկոյի Թագավորությանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ալֆրեդ Քոչարյան

18.09.2019